



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» հուլիս 2023 թ.

N 105-ՆԾ/1

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԼՍՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 103-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման կիրարկումն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

- Հաստատել պետական հավաստագրի հիման վրա լսողական սարքի տրամադրման ցուցումների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետին՝ ապահովել սույն հրամանի տրամադրումը առողջապահության նախարարությանը, մարզպետների աշխատակազմեր և Երևանի քաղաքապետարան:
- Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ սույն հրամանը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:




4. Միասնական սոցիալական ծառայության պետին՝ ապահովել սույն հրամանի հավելվածով հաստատված մեթոդական ուղեցույցի կիրառումը բժշկասոցիալական փորձաքննության, անձի ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողովների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագիրը կամ ծառայությունների անհատական ծրագիրը կազմելու ընթացքում:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի օգոստոսի 12-ի «Լսողական խնդիրներ ունեցող անձանց լսողական սարքեր տրամադրելու ցուցումների և հակացուցումների մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 103-Ա/1 հրամանը:

6. Սույն հրամանի հսկողությունը վերաաահել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ ոլորտը համակարգող տեղակալին:



X 
ՆԱՐԵԿ ՄԿՐՏՅԱՆ

Signed by: MKRITCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՅԱՆ

ՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԼՍՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Լսողական սարքերը, որպես աջակցող միջոցներ, նախատեսված են անձի ֆունկցիոնալությունը բարելավելու, կենսապորձունեության (հնչող ձայնի բարձրության, որակի, խոսքի՝ այդ թվում աղմկոտ միջավայրում պարզորոշ ընկալում) և մասնակցության սահմանափակումները լրիվ կամ մասնակի հաղթահարելու և (կամ) փոխհատուցելու (փոխարինելու) համար:

2. Լսողության խանգարումներ ունեցող անձանց լսաախտորոշումը և ծանրալսության աստիճանը որոշվում է աուդիոմետրիայի և (կամ) ակուստիկական իմպեդանսոմետրիայի և (կամ) այլ գործիքային հետազոտությունների միջոցներով:

3. Ծանրալսությունը արտաքին միջավայրի ձայները լսելու, բանավոր խոսքի պարզորոշ ընկալման լրիվ կամ մասնակի խանգարումն է: Ծանրալսության դեպքում մարդը կորցնում է ցածր ինտենսիվության ձայները ընկալելու և տարբերելու ունակությունը: Այն կարող է լինել միակողմանի կամ երկկողմանի: Ծանրալսությունը համարվում է միակողմանի, երբ վատ լսող ականջում լսողության շեմը գերազանցում է 25 դԲ-ը, իսկ մյուսում՝ շեմը պահպանված է (0-25 դԲ):

4. Լսողության խանգարման (լսողական ֆունկցիայի խանգարման) աստիճանները, ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) դասակարգվում է համաձայն աղյուսակ 1-ի՝



Աղյուսակ 1

| Հ/հ | Ծանրալսության աստիճան (լսողական ֆունկցիայի խանգարման աստիճան) | Լսողության խանգարում դԲ-ով (500, 1000, 2000, 4000 հց հաճախականության միջին թվաբանականը) |
|-----|---|--|
| 1. | Լսողական ֆունկցիայի խանգարում չկա (0) | 0 -25 դԲ (լավ լսող ականջում) |
| 2. | Թեթև՝ 1-ին աստիճան (I) | 26-40դԲ (լավ լսող ականջում) |
| 3. | Միջին՝ 2-րդ աստիճան (II) | 41-60 դԲ (լավ լսող ականջում) |
| 4. | Ծանր՝ 3-րդ աստիճան (III) | 61-80 դԲ (լավ լսող ականջում) |
| 5. | Խորը՝ 4-րդ աստիճան (IV) | 81 դԲ և ավել |

5. Լսողական սարք ձեռք բերելու նպատակով պետական հավաստագիր տրամադրելու ցուցումներն են՝

1) մինչև 18 տարեկան երկկողմանի լսողական խանգարում ունեցող երեխաներին՝ լսողական ֆունկցիայի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանների խանգարման դեպքերում.

2) 18-29 (ներառյալ) տարեկան լսողական խնդիրներ ունեցող անձանց՝ լսողական ֆունկցիայի երկկողմանի 2-րդ կամ երկկողմանի 3-րդ կամ երկկողմանի 4-րդ աստիճանի խանգարման կամ մեկ կողմից 2-րդ, իսկ մյուս կողմից՝ 3-րդ աստիճանի խանգարման կամ մեկ կողմից 3-րդ, իսկ մյուս կողմից՝ 4-րդ աստիճանի խանգարման կամ մեկ կողմից 2-րդ, իսկ մյուս կողմից՝ 4-րդ աստիճանի խանգարման դեպքերում.

3) 30-64 (ներառյալ) տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում նաև ոչ ծանրալսությամբ)՝ լսողական ֆունկցիայի երկկողմանի 2-րդ կամ երկկողմանի 3-րդ կամ երկկողմանի 4-րդ աստիճանի խանգարման կամ մեկ կողմից 2-րդ, իսկ մյուս կողմից՝ 3-րդ աստիճանի խանգարման կամ մեկ կողմից 3-րդ, իսկ մյուս կողմից՝ 4-րդ աստիճանի խանգարման կամ մեկ կողմից 2-րդ, իսկ մյուս կողմից՝ 4-րդ աստիճանի խանգարման դեպքերում.

4) 65 և բարձր տարիքի լսողական խնդիրներ ունեցող անձանց՝ լսողական ֆունկցիայի երկկողմանի 2-րդ կամ երկկողմանի 3-րդ կամ երկկողմանի 4-րդ աստիճանի խանգարման



կամ մեկ կողմից 2-րդ, իսկ մյուս կողմից՝ 3-րդ աստիճանի խանգարման կամ մեկ կողմից 3-րդ, իսկ մյուս կողմից՝ 4-րդ աստիճանի խանգարման կամ մեկ կողմից 2-րդ, իսկ մյուս կողմից՝ 4-րդ աստիճանի խանգարման դեպքերում:

6. Լսապրոթեզավորումը կարող է լինել միակողմանի (մոնաուրալ) և երկկողմանի (բինաուրալ): Երկկողմանի լսապրոթեզավորումն իրականացվում է քիթ-կոկորդ ականջաբանի հիմնավորված ցուցումով, որը պետք է արտացոլված լինի Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման 6-րդ հավելվածով հաստատված տեղեկանքում: Այս դեպքում յուրաքանչյուր ականջի համար տրամադրվում է համապատասխան հզորության սարք:

7. Լսողական սարք տրամադրելու բժշկական հակացուցումներն են՝

- 1) վեստիբուլյար ապարատի ֆունկցիայի խանգարում.
- 2) արտաքին և միջին ականջների սուր բորբոքային կամ խրոնիկ բորբոքային պրոցեսների սրացում.
- 3) լսողությունը լավացնելու նպատակով կատարված վիրահատություններից հետո՝ առաջին ամիսներին.
- 4) ուղեղի արյան շրջանառության խանգարումների դեպքում.
- 5) լսողական խնդիրների ախտոլուծումը ճշտելու փուլում:

8. Լսապրոթեզավորման արդյունավետությունը չափվում է մի քանի ցուցանիշներով՝

- 1) բժշկական, որն իրենից ներկայացնում է իրական տանելիության ուժեղացման որոշումը.
- 2) սոցիալական, որն ընդգրկում է ուսումնառելու կարողությունների զարգացումը, իր մասնագիտությամբ աշխատելու, ակտիվ հասարակական կյանք վարելու հնարավորությունը, հաղորդակցման հմտությունների զարգացումը և այլն.
- 3) լսապրոթեզավորման արդյունավետությունը որոշվում է ինչպես աուդիոմետրիկ հետազոտության, այնպես էլ էլեկտրոակուստիկ կորրեկցիայի ցուցանիշներով, ընդ որում, արդյունավետությունը որոշվում է աուդիոմետրիայով ինչպես առանց լսողական սարքի, այնպես էլ լսողական սարքով:

9. Լսապրոթեզավորման գնահատման օբյեկտիվ չափանիշներն են՝



1) խոսքի ընթեռնելիությունը (խոսվածի հասկանալի ըստ լսողության իջեցման մակարդակի և խոսքի զարգացման) լուրջաբար մեջ, աղմկոտ միջավայրում և խմբային զրույցի ժամանակ.

2) խոսքի, սեփական ձայնի և շրջակա միջավայրի ձայներն ընկալելու զգացողությունը.

3) ձայնի տեղակայումը (լուրջաբար) ընկալելը.

4) վտանգ հանդիսացող ազդակների ընկալելը,

5) հետադարձ ակուստիկ կապի բացակայությունը:

10. Վերոնշյալ չափանիշներն ու ցուցանիշները հաշվի են առնվում լսողական սարքերի տրամադրման գործընթացի մոնիթորինգի ժամանակ:

